ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2026 թվականի մարտի 22-24-ը Վրաստան գործուղման արդյունքների մասին**

1. **ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ**

   Արթուր Մարտիրոսյան

   Արմենուհի Պետրոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

   Երիտասարդության հարցերի վարչության պետի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաք և Կախեթի տարածաշրջանի Թելավի քաղաք 2026 թվականի մարտի 22-24-ը:

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության նախարարություն:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Այցի նպատակն էր խթանել Հայաստանի և Վրաստանի երիտասարդների համագործակցությունը, ամրապնդել բարեկամական հարաբերությունները և հիմք ստեղծել ապագա համատեղ ծրագրերի համար:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի գլխավորած պատվիրակությունը մարտի 23-ին մասնակցել է մարտի 22-28-ը Վրաստանի Հանրապետության Կախեթի շրջանի Թելավի քաղաքում Հայաստանի և Վրացական երիտասարդների համար կազմակերպված երիտասարդական ճամբարի բացման արարողությանը, հանդես եկել ելույթով, պատասխանել երիտասարդների հարցերին: Ավելի քան ութ տասնյակ երիտասարդների մասնակցությամբ կազմակերպված ֆորումին Հայաստանից մասնակցում են ներկայացուցիչներ ակտիվ երիտասարդական շրջանակներից, ՀՀ բուհերից, ինչպես նաև ԿԳՄՍ նախարարության ստեղծած և ՀՀ մարզերում գործող երիտասարդական կենտրոններ հաճախող երիտասարդներից:

## 6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Արթուր Մարտիրոսյանը իր ելույթում կարևորել է նմանօրինակ նախաձեռնությունների անցկացումը՝ նշելով, որ այն հարթակ է երկու երկրների համագործակցության խորացման, ինչպես նաև երիտասարդների միջև ուղիղ շփումների, փորձի փոխանակման և փոխըմբռնման ամրապնդման համար: Կարևորելով Հայաստան-Վրաստան պատմական բարեկամական կապերը՝ նա ընդգծել է անկախությունից հետո երկկողմ շփումների զարգացումն ու համագործակցության խորացումը՝ երկկողմ և բազմակողմ ծրագրերի կյանքի կոչմամբ:

«Մենք կարևորում ենք միջազգային համագործակցության ընդլայնումն ու խորացումը՝ որպես երիտասարդական քաղաքականության արդյունավետ իրականացման կարևոր բաղադրիչ: Այս առումով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում համագործակցությունը մեր հարևան և բարեկամ Վրաստանի հետ: Վերջին տարիներին մեր երկրների միջև երիտասարդական համագործակցության կայուն և դինամիկ զարգացում է արձանագրվել: Մասնավորապես՝ ձևավորվել է արդյունավետ համագործակցության ավանդույթ՝ կազմակերպելու Հայաստանի և Վրաստանի երիտասարդների մասնակցությամբ տարեկան երիտասարդական միջոցառումներ: Դրանք կարևոր հարթակ են փորձի փոխանակման, նոր գաղափարների ձևավորման, միջանձնային և ինստիտուցիոնալ կապերի զարգացման առումով»,- ասել է Արթուր Մարտիրոսյանը:

Հայաստան-Վրաստան համագործակցության շրջանակում նա կարևորել է կրթական տարբեր մակարդակներում փոխգործակցությունը՝ անդրադառնալով Թբիլիսիի պետական համալսարանում գործող հայագիտական կենտրոնի գործունեությանը, Երևանի պետական համալսարանում վրացագիտության կենտրոնի գործունեությանը, Հայաստանի և Վրաստանի բուհերում փոխադարձաբար հատկացվող կրթաթոշակային տեղերին: Արթուր Մարտիրոսյանը ներկայացրել է ՀՀ հանրակրթական դպրոցներում ներդրված տարածաշրջանային լեզուների ուսուցման ծրագիրը, որում ներառված է նաև վրացերենի ուսուցումը: Նա շեշտել է նաև Վրաստանի հայկական դպրոցներում հայերենի արդյունավետ ուսուցման կարևորությունը:

Եզրափակելով խոսքը՝ Մարտիրոսյանը դիմել է երիտասարդներին՝ ընդգծելով, որ նրանց ակտիվ մասնակցությունը, գաղափարներն ու նախաձեռնությունները կարևոր դեր ունեն հասարակությունների ապագայի կերտման գործում. «Համոզված եմ, որ այս ֆորումը կդառնա արդյունավետ երկխոսության և նոր համագործակցությունների սկիզբ: Ուրախ եմ, որ նման նախաձեռնություններն ունեն շարունակական բնույթ և դարձել են ամենամյա: Վստահ եմ, որ դրանք կընդլայնվեն՝ ընդգրկելով նոր թեմատիկ ուղղություններ և համագործակցության նոր ձևաչափեր»:

Արմենուհի Պետրոսյանը ներկայացրել է ՀՀ երիտասարդական քաղաքականության զարգացումները, Հայաստանի փորձը երիտասարդության ոլորտում, անդրադարձել 2025 թվականին ոլորտային օրենքի ընդունումից հետո Հայաստանի երիտասարդական քաղաքականության հիմնական ուղղություններին: «Հայաստանում երիտասարդությունը դիտարկվում է որպես երկրի զարգացման ռազմավարական ռեսուրս: Պետական քաղաքականության առանցքում են երիտասարդների ներուժի բացահայտումը, նրանց մասնակցության խթանումը և ինքնաիրացման հնարավորությունների ստեղծումը: Վերջին տարիներին երիտասարդական քաղաքականությունն աստիճանաբար անցում է կատարել

ծրագրային մոտեցումից դեպի ավելի համակարգային և ինստիտուցիոնալ զարգացման փուլ: 2025 թվականը կարելի է վստահորեն համարել բեկումային Հայաստանի երիտասարդական քաղաքականության համար»,- նշել է նախարարության ներկայացուցիչը և անդրադարձել արդեն ընդունված «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի սահմանած հիմնական սկզբունքներին, նպատակներին և դերակատարների շրջանակին:

Քննարկման ընթացքում Արմենուհի Պետրոսյանը ընդգծել է, որ Հայաստանում մեծ ուշադրություն է դարձվում երիտասարդական աշխատանքին՝ որպես երիտասարդների հետ ոչ ֆորմալ կրթության և զարգացման կարևոր գործիք: «Հայաստանի պետական քաղաքականության կարևոր ուղղություններից է երիտասարդական միջավայրերի ձևավորումը: Խոսքը վերաբերում է այնպիսի անվտանգ և զարգացնող տարածքների ստեղծմանը, որտեղ երիտասարդները կարող են սովորել նոր հմտություններ, իրականացնել նախաձեռնություններ, շփվել և համագործակցել: Հայաստանի երիտասարդական քաղաքականության կարևոր ուղղություններից է նաև միջազգային համագործակցության զարգացումը: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն ունի համագործակցությունը Վրաստանի հետ»,- ասել է Արմենուհի Պետրոսյանը:

Վրաստան կատարած այցի շրջանակում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը հանդիպում է ունեցել նաև Վրաստանի մշակույթի նախարար Գեորգի Միրցխուլավայի հետ, որի ընթացքում քննարկվել են առաջիկա օրերին Հայաստանում կազմակերպվելիք Աջարիայի մշակույթի օրերի, տարվա երկրորդ կեսին Վրաստանում անցկացվելիք Հայաստանի մշակույթի օրերի կազմակերպման աշխատանքներին վերաբերող հարցեր և Հայաստան-Վրաստան մշակութային օրակարգի այլ հարցեր:

Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Զվիադ Գաբիսոնիայի հետ երկկողմ աշխատանքային հանդիպման ժամանակ քննարկվել են կրթության, գիտության և երիտասարդության ոլորտներում համագործակցության շրջանակներում ընթացիկ և պլանավորվող աշխատանքներին վերաբերող հարցեր:

**8.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ԱՐՄԵՆՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ԱՄՍԱԹԻՎԸ՝** 26.03.2026թ.